

Եթե դուք չեք կողմնորոշվում ընտրության հարցում և չեք ընտրում ո՛չ ֆոնդ, ո՛չ ֆոնդի կառավարիչ, ապա համակարգը պատահական ընտրանքով կընտրի կառավարիչներից որևէ մեկի առաջարկած **պահպանողական ֆոնդը**:

Ընթացքում հետևելով Ձեր կուտակային միջոցների կառավարմանը և ձեռք բերելով գիտելիքներ՝ դուք կարող եք ցանկացած պահի փոխել Ձեր ֆոնդը/ֆոնդի կառավարչին:

Ֆոնդի/ֆոնդի կառավարչի փոփոխությունը տարեկան մեկ անգամ կատարվում է անվճար, մնացած դեպքերում դրա համար կարող է գանձվել օրենքով սահմանված որոշակի վճար:

**Առաջարկվող ֆոնդեր՝**

**Կայուն եկամտային ֆոնդ.**

ճերդրում **պարտատոմսերում** (օրինակ)



**Պահպանողական ֆոնդ.**

մինչև **25% բաժնետոմս** + **75% պարտատոմս** (օրինակ)



**Հավասարակշռված ֆոնդ.**

մինչև **50% բաժնետոմս** + **50% պարտատոմս** (օրինակ)



**Այս շարքից.**



**ԿՆԻԿ**

«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ



**ԽՆԱՅՈՒՄ ԵՆՔ ԲԱՐԵԿԵՅԻԿ ԱՊԱԳԱՅԻ ՀԱՄԱՐ**

հնացիր ավելին...

**www.ePension.am**



«Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ

Հասցե՝ Երևան, 0069, Կարապետ Ուլունցի 68

060 50 74 00  
060 50 87 00

ePension@ePension.am



Այս տեղեկատվական բերթիկը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄՁԳ) միջոցով: Բովանդակությունը միմիայն հեղինակներինն է և պարտադիր չէ, որ արտահայտի ԱՄՆ ՄՁԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:

**ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄՆԵՐ**



**www.ePension.am**

2014 թվականի հուլիսի 1-ից մեկնարկել է

## ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՍՆԱԿԱՐԳԸ

**Եթե Դուք ծնվել եք 1974 թվականին կամ դրանից հետո  
և վարձու աշխատող եք, նոտար կամ անհատ  
ծեռնարկատեր, ապա 2014 թվականի հուլիսի 1-ից  
Դուք **ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ** համակարգի  
մասնակից եք:**

Ընտրեք **ԱԿՏԻՎԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ**, որը պետք է կառավարի Ձեր  
կուտակած գումարները, և **ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴ**,  
որով պետք է ապահովվեն Ձեր եկամուտները:

Կենսաթոշակային ֆոնդը ձևավորվում է մասնակիցների և պետության  
կողմից նրանց օգտին կատարված սոցիալական վճարների հաշվին և  
կենսաթոշակային տարիքում իր մասնակիցներին ապահովում կենսա-  
թոշակով: Ֆոնդի կառավարումն իրականացնում է ֆոնդի կառավարիչը,  
որը հատուկ մասնագիտացված ֆինանսական կազմակերպություն է:

**Կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ  
Դուք կարող եք ընտրել`**

1. [www.epension.am](http://www.epension.am) կայքի «ԻՄ ՀԱՇԻՎԸ» էջի միջոցով,
2. Հաշվի օպերատորի միջոցով:

## 1. Ինչպես ընտրել ֆոնդ/ֆոնդի կառավարիչ «ԻՄ ՀԱՇԻՎԸ» էջի միջոցով

### Քայլ 1.

Դիմել ցանկացած անձնագրային բաժանմունք և ձեռք բերել նույն-  
նականացման քարտ (ID քարտ):

### Քայլ 2.

Դիմել «Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմ-  
նադրամ և ձեռք բերել նույնականացման քարտ կարդացող սարք:

### Քայլ 3.

[www.ePension.am](http://www.ePension.am) կայքում մուտք գործել «ԻՄ ՀԱՇԻՎԸ» համա-  
կարգ` նույնականացման քարտ կարդացող սարքի միջոցով` մուտ-  
քագրելով PIN ծածկագիրը, որը տրամադրվում է նույնականացման  
քարտի հետ:

### Քայլ 4.

«Իմ դիմումները» բաժնից ընտրեք «Պարտադիր կենսաթոշակային  
ֆոնդի ընտրության» դիմումը և լրացրեք, ապա սեղմեք «ապահա-  
նել» կոճակը, այնուհետև դիմումը ևս մեկ անգամ ստուգելուց հետո  
սեղմեք «ընդունել» կոճակը:

- **«ԻՄ ՀԱՇԻՎԸ» համակարգի միջոցով կարող եք նաև`**
  - ✓ հետևել կուտակային գումարներին,
  - ✓ փոխել կատարված ընտրությունը,
  - ✓ ստանալ տեղեկատվություն և քաղվածքներ:

## 2. Ինչպես ընտրել ֆոնդ/ֆոնդի կառավարիչ Հաշվի օպերատորի միջոցով

Հաշվի օպերատորը միջնորդ կազմակերպություն է, որը կարող է  
լինել որևէ բանկ կամ «Հայփոստի» որևէ բաժանմունք:

Այս պահի դրությամբ Հաշվի օպերատոր ընկերություններն են`

«Արդշինինվեստբանկ» ՓԲԸ	<a href="http://www.ashib.am">www.ashib.am</a>
«Արարատբանկ» ԲԲԸ	<a href="http://www.araratbank.am">www.araratbank.am</a>
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ	<a href="http://www.ambusinessbank.am">www.ambusinessbank.am</a>
«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան» ՓԲԸ	<a href="http://www.hsbc.am">www.hsbc.am</a>
«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ	<a href="http://www.vtb.am">www.vtb.am</a>
«Ինեկոբանկ» ՓԲԸ	<a href="http://www.inecobank.am">www.inecobank.am</a>
«Կոնվերս բանկ» ՓԲԸ	<a href="http://www.conversebank.am">www.conversebank.am</a>
«Հայփոստ» ՓԲԸ	<a href="http://www.haypost.am">www.haypost.am</a>

Հաշվի օպերատորները ունեն մասնաճյուղերի լայն ցանց, ուստի  
կարող եք այցելել Ձեզ մոտ գտնվող որևէ մասնաճյուղ, որտեղ Դուք  
կարող եք ընտրել ֆոնդ և ֆոնդի կառավարիչ:

### Քայլ 1.

- այցելեք Ձեր մախընտրած հաշվի օպերատորին,
- ներկայացրեք անհրաժեշտ փաստաթղթերը`  
նույնականացման քարտ (ID քարտ) կամ  
անձնագիր և հանրային ծառայությունների համարանիշ  
(սոցիալական քարտ) կամ հանրային ծառայության  
համարանիշ չունենալու մասին տեղեկանք:

### Քայլ 2.

- Ինքնուրույն կամ համապատասխան աշխատակցի միջոցով  
լրացրեք «Պարտադիր կենսաթոշակային ֆոնդի ընտրության»  
դիմումը: Համապատասխան աշխատակիցը լրացված էլեկտրո-  
նային դիմումը տպում է 2 օրինակից և մեկը տրամադրում Ձեզ:  
**Մինչև ստորագրելը ուշադիր և մանրամասն կարդացեք  
դիմումում լրացված յուրաքանչյուր վանդակ:**

### ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ`

Չմոռանաք վերցնել էլեկտրոնային դիմումի ստորագրված Ձեր  
թղթային օրինակը:

Հաշվի օպերատորին և նրա աշխատակիցներին արգելվում է  
գովազդել կամ որևէ կերպ ուղղորդել Ձեզ ընտրելու կենսաթո-  
շակային ֆոնդ կամ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ:

### ՃԻՇՏ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

## ԿԱՐԵՎՈՐ Է

Ուսումնասիրել շուկան, տեղեկանալ շուկայում գործող կենսաթոշա-  
կային ֆոնդի կառավարիչների և նրանց կողմից առաջարկվող կենսա-  
թոշակային ֆոնդերի մասին և համեմատել դրանք:

**Ֆոնդերի կառավարիչների վերաբերյալ տեղեկատվություն կարող  
եք ստանալ նրանց հայալեզու կայքերից`**

[www.amundi-acba.am](http://www.amundi-acba.am) և [c-quadrat-ampega.am](http://c-quadrat-ampega.am),

[www.cba.am](http://www.cba.am) կայքից,

[www.epension.am](http://www.epension.am) միասնական կենսաթոշակային պորտալից:

**ԿԱՏԱՐԵՔ ԶԵՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ,  
ՍԱՆՆԱԿՑԵՔ ԶԵՐ ԳՈՒՄԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ**